ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«21» հունիսի 2018թ. No 235-Կ

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՊՐՈՖ. Ռ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 85-րդ և 86-րդ հոդվածների 1-ին կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «է» ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշման հավելվածի 6.2. կետը, ինչպես նաև Սամվել Դանիելյանի դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սամվել Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՊՐՈՖ. Ռ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ կնքելով նրա հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

2. Սամվել Դանիելյանին ՝

ընդունել կազմակերպության գույքը և փաստաթղթերը Սմբատ Դաղբաշյանից;

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ս.Սողոմոնյանին՝ նախապատրաստել Սամվել Դանիելյանի հետ կնքվելիք աշխատանքային պայմանագիրը և ներկայացնել կողմերի ստորագրմանը:

4. Սամվել Դանիելյանի վարձատրությունը կատարել համաձայն աշխատանքային պայմանագրի:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

20.06.2018

VERIFIED OCSP 20.06.2018 20:54:10 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ